

ԱՆԱՆՅԱՆ ՍԵՐԻԿ
ԲԺՇԿԱԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ԻՆՉ Ե ԲՐՈՒՑԵԼՈՉԸ

Z U B M E S Z R A S

ՅԵՐԵՎԱՆ

1940



ԱՆԱՆՅԱՆ ՍԵՐԻԿ
ԲԺՇԿԱԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

616.929.1

Ա-55

ԱՏՈՒԿԱՄ Է 1951 թ.

ԻՆՉ Ե ԲՐՈՒՑԵԼՈՉԸ

2999

A $\frac{1}{2505}$



Հ Ա Յ Պ Ե Տ Ղ Մ Ն Շ
Ն Ր Դ Գ Ե Լ Ը

1940

Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ա. Ալեքսանյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչներ՝ Ա. Արզաբանյան Բ. Ղուկասյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ա. Շաթիրյան

С. АНАНЯН
ЧТО ТАКОЕ БРУЦЕЛЛЕЗ
Гиз Арм. ССР, Ереван, ул. Ленина, 65

Փրակիտի լիազոր՝ Բ-1049. Հրատ. № 5086
Պատվեր 863. Տիրամ 1700.

Հայպետհրատի I տպարան, Յերևան, Լենինի, 65

ԻՆՉ Ե ԲՐՈՒՑԵԼՈՋԸ

Բրուցելոզն ընտանի կենդանիների (վոչխարների, այծերի, խոզերի, կովերի) ուր վարակիչ հիվանդութունն է, վոր առաջանում է վորոշ տեսակ մանրէներից (միկրոբներից):

Վերջիններս հայտնի յեն «բրուցելա» անունով:

Յերբ այդ հիվանդութունն ընտանի կենդանիների մեջ տարածվում է, մարդիկ նրանցից վարակվում են կամ կենդանիների հետ շփվելիս, կամ նրանց կաթնամթերքները գործածելու հետևանքով:

Բրուցելոզ հիվանդության պատմութունը կապված է Միջերկրական ծովի շրջանի հետ: Ծովի ափերին և կղզիների վրա (Մալթա կղզի) գտնվելիս են յեղել այդ հիվանդության ոջախները (այստեղից էլ առաջացել է «մալթիական տենդ» անունը): Դրա առանձին նշանները մարդկությանը հայտնի յեն յեղել վաղուց: Ավելի ուշ ժամանակները, 18-րդ դարում, առանձին բժիշկներ տվել են այդ հիվանդության նրկարագրութունը:

Մալթիական տենդի իսկական պատմութունն սկսվում է 19-րդ դարի յերկրորդ կեսից, յերբ Մալթա կղզում, անգլիական զինվորների մեջ, այդ հիվանդության զեպքեր արձանագրվեցին, իսկ 1887 թվին անգլիական գիտնական Բրյուտը հիվանդ նա-

վաստու արյան մեջ դասով մալթիական անհոգ հիվանդու-
դության հարուցիչ միկրոբը (կենդանի էյակ է, վոք
հաստքակ աչքով մարդուն տեսանելի չէ, նրան կա-
րելի չէ տեսնել միայն մեծացնող գործիքի—միկրոո-
կոպի միջոցով), այդ միկրոբը կոչվեց մալթիական
միկրոկոկկ, վորովհետև միկրոոկոպի տակնա ունի մանր
կոկկերի, գնդիկների տեսք, և այժմ ել գիտնա-
կան Քրյուսի անուով այդ հիվանդությունը կոչվում
է բրուցելոզ:

Հիվանդության միկրոբը գտնելուց հետո անհրա-
ժեշտ եր վորոշել, թի վորտեղից է առաջ գալիս վա-
րակը:

19-րդ դարի վերջերում կոնդոնից ուղարկվեց հա-
տուկ բժշկական գիտական հանձնաժողով՝ վորը յեր-
կար տարիներ Մալթա կղզում ուսումնասիրում եր
միջավայրի բոլոր պայմանները (ջուրը, ողը, հողը և
այլն), վորպեսզի պարզի վարակի ոջախները բնության
մեջ, բայց վոչինչ չեր հաջողվում՝ մինչև վոր պատա-
հական կերպով բժիշկ Ջամմետին հաջողվեց գտնել,
վոր Մալթայի այժերը վարակված են բրուցելոզով:

Վարակված այժերն այդ միկրոբներն արտադրում
էին իրենց կաթի միջոցով. որանից հասկանալի չեր,
վոր անգլիական զինվորներն այդ հիվանդությունով
վարակվում են հում կաթ գործածելով:

Սյգպես որինակ, 1907 թվին Մալթա կղզում ար-
ձանագրված եր զինվորների մեջ հիվանդության 643
դեպք, իսկ 1907 թվին, այժի հում կաթն արգելելուց
հետո արձանագրվեց հիվանդության միայն 7 դեպք:

Հետագա ուսումնասիրությունները պարզեցին, վոր
մալթիական տենդ հիվանդությունը գտնվում է մանր

յեղջերավոր անասունների՝ այծերի և վոչխարների մեջ, այդ հիվանդութիւնը դրանց մոտ արտահայտւում է նախածննդյան շրջանում տեղի ունեցող վիժումներով:

Անկախ այդ հիվանդութեան գոյութիւնից անասնաբուժները գիտեցին խոշոր յեղջերավոր անասունների մի ուրիշ վարակիչ հիվանդութիւն ևս (Բանգի հիվանդութիւն, կամ ինֆեկցիոն արորտ) վոր վիժումներ եր առաջ բերում կովերի մեջ: Իրա հարուցիչը Բանգը և Սորիլտը գտել էջին 1897 թվին, վիժում ունեցած կովի սաղմը շրջապատող հեղուկի մեջ:

1914 թվին խոզերի վիժումների ժամանակ գիտնական Տրաուսը գտավ մի միկրոբ, վոր չափազանց նմանվում էր Բանգի գտած «ինֆեկցիոն արորտի» միկրոբին:

Սակայն այդ յերեք տեսակի հիվանդութիւններն ուսումնասիրվում էջին վորոպես առանձին հիվանդութիւններ, յերբեք համեմատութեան չեջին դրվում միմյանց հետ, մինչև վոր ամերիկական գիտնականուհի Ալիսա Եվինը մանրակրկիտ ստուգեց այդ յերեք հիվանդութիւնների հարուցիչները և յեկավ այն յեղրակացութեան, վոր միկրոբների այդ յերեք տեսակները չափազանց նման են միմյանց թէ քսիրենց արտաքին ձևի և թէ ընդունակութիւններով՝ բուցելով հիվանդ մարդու արջան շիճուկի հետ տալ դրական ուսակցիա (վերջինս հայտնաբերել է գիտնական Ռայտը, — այդպես էլ կոչվում է Ռայտի ուսակցիա):

Ալիսա Եվինսին հաջողվեց հղի կովին վարակել մալթիական միկրոկոկով (վոչխարների հիվանդութեան հարուցիչով) և վիժում ստանալ:

Մի շարք ուրիշ դիտնականների ուժերով հաջող-
վեց ապացուցել, վոր հնարավոր և վոչ միայն խոշոր
յեղջերավոր անասուններին վարակել մալթիական
միկրոկոկով, այլ և ընդհակառակը, մարդն ընդու-
նակ և վարակվելու բրուցելոզի յերեք տեսակի միկ-
րոբներով ել:

Գիտնականները շարունակում եյին այդ հիվան-
դության միկրոբի ուսումնասիրությունը և յեկան
այն յեղրակացության, վոր տարբեր կենդանիներից
բրուցելոզով վարակվելը միատեսակ չի ընթանում
մարդու համար.— խոշոր յեղջերավոր անասունների և
խոզերի բրուցելոզը համեմատաբար ավելի քիչ և
վաճանգավոր (վարակիչ) մարդու համար, առաջ և բե-
րում հիվանդացման հազվագյուտ դեպքեր, այնինչ
մանր յեղջերավոր անասունների (վոչխարների, այ-
ծերի բրուցելոզը) չափազանց վարակիչ և մարդու հա-
մար, յերբեմն կրում և համաճարակի բնույթ:

Բացի դրանից պարզվեց, վոր մարդը բրուցելոզով
վարակվում և վոչ միայն աղետամոքսային ճանա-
պարհով, դորժածելով վարակված այծերի, վոչխար-
ների և կովերի կաթնամթերքներ, այլ և վարակը կա-
բող և անցնել մարդու ներքև նաև մաշկի ու լորձա-
թաղանթների միջով, յերբ մարդը շփվում և հի-
վանդ կենդանիների և նրանց արտաթորություն-
ների հետ (հովիվներ, անասնաբուժներ և այլն):

Հարուցիչ միկրոբի
սոկուլուսը յուր
գրսի մթնուրսում

Բրուցելոզի միկրոբն ուժեղ
կենսունակություն ունի: Նա
ընդունակ և մնալու արտաքին
միջավայրի պայմաններում,

նա ապրում և կաթի մեջ 20—40 օր, մաճնի ու պան-

էի մեջ 21 որ, աղ դրած բրինձա պանրի մեջ 15—45 որ, յուղի մեջ 20 որ, ջրի մեջ 10—72 որ, փոշու մեջ 30 որ, խոնավ հողի ու գոմաղբի մեջ մինչև 72 որ:

37 աստիճանի չորացումը բրուցելոցի միկրոբներին սպանում է 2 որում, 55 աստիճանի ջերմությունը՝ 1 ժամում, 70 աստիճանի ջերմությունը՝ 3 րոպեյում, 80 աստիճանի՝ 2 րոպեյում:

**Միկրոբի սոկու-
նուքյունը հան-
գեպ ֆիսիական
նյութերի**

Յեթե վորևէ անտեսությունում բրուցելոցի հիվանդություն է առաջ գալիս, նրա դեմ պայքարելու գործում հրակայական նշանակություն ու-

նի դեղինֆիկցիան—շենքերի, հողի, գոմաղբի և այն քոլոր իրերի ախտահանությունը, վորոնք կարող են վարակի աղբյուր հանդիսանալ, ըստ վորում պետք է իմանալ, թե վոր դեպքում ինչ գործածել:

Չանազան գիտնականների վորձերը տվի են հետևյալ արդյունքը. $2^0/0$ -ոց կարբոլյան թթուն բրուցելայի միկրոբներին սպանում է անմիջապես, իսկ 0, $5^0/0$ -ոց լիզոլը՝ 1 րոպեյում, 0, $2^0/0$ -ոց ֆորմալինը միկրոբներին սպանում է անմիջապես, սուլեմայի 1:10, 000 լուծույթն սպանում է իսկույն, իսկ $5^0/0$ անոց քլորակիրը՝ 50 րոպեյում: Ուրեմն շենքերի դեղինֆիկցիայի համար կարելի չէ առաջարկել $2^0/0$ անոց կարբոլյան թթու, 0, $5^0/0$ անոց լիզոլ, իսկ հողի և գոմաղբի հականեխման համար քլորակիր, կամ $5^0/0$ անոց թարմ կիր (վերցնել մոտ կես կիլո կիր և ավելացնել ջուր):

**Բրուցելոզի սարս-
ձումք սահմա-
նամեճ յերկր-
ներում յեվ
ԽՍՀՄ-ում**

Անցյալներում կարծում էին,
թե բրուցելոզը տարածված է
միայն տաք, հարավային շրջ-
ջաններում (Մալթա կղզում,
Միջերկրական ծովի ափերին
և այլն) բայց հետագայում
պարզվեց, վոր նա թե մարդկանց, թե կենդանիների
մեջ գոյություն ունի նաև բարեխառն, նույնիսկ
ցուրտ կլիմայական պայամաններում:

Բրուցելոզը մի հիվանդություն է, վոր տարած-
ված է յերկրագնդի բոլոր մասերում:

Յեվրոպայում նա տարածված է Միջերկրական
ծովի կղզիներում, Իտալիայում, Ֆրանսիայում, Պոր-
տուգալիայում, Իսպանիայում, Հունաստանում, Գեր-
մանիայում, Շվեդիայում, Անգլիայում:

Բրուցելոզը տարածված է նաև Միջին և Հարա-
վային Աֆրիկայում, Ամերիկայում (Կանադա, Հյուս-
սիսային և Հարավային Ամերիկա):

Ասիայում— Փոքր Ասիայում, Սիրիայում, Պա-
ղեստինում, Թուրքիայում, Իրանում, Հնդկաստանում,
Չինաստանում, Ֆիլիպպյան կղզիներում:

Մարդու բրուցելոզի հիվանդության պատահական
դեպքեր արձանագրված են, այն ել վոճ լրիվ՝ Որին-
նակ Դանիայում 1927—28 թ.թ. մարդկանց մեջ հայտ-
նաբերված է 500 դեպք, Գերմանիայում 1929—30 թ. թ.
արձանագրված է 627 դեպք, Ամերիկայում՝ միայն
1930 թվին 2365 դեպք, Ֆրանսիայում, վորը հան-
դիսանում է մանր յեղջերավոր անասնաբուծության
վայր, 90 շրջաններից 75-ում տարածված է բրուցե-
լոզ: Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս միայն ար-

ձանագրված դեպքերը, իրականում հիվանդությունն այդ յերկրում ավելի մեծ չափերի յե հասնում:

**Բրուցելոզը
ԽՍՀՄ-ում**

ԽՍՀՄ սահմաններում այդ հիվանդությունը նկատվում է մեծ մասամբ վոլչխարաբուծությամբ զբաղվող վայրերում, սակայն վերջին տարիներս բրուցելոզի ուժեղացում է նկատվել և ուրիշ վայրերում, որինակ Ուրալի մարզում, Արևմտյան Սիբիրում, մերձվոլգյան շրջանում, և այլ տեղեր:

Անդրկովկասում այդ հիվանդությունը հայտնաբերվել է առաջին անգամ 1922 թ. Ադրբեջանում, հետագայում, 1923 թ. այդ հիվանդությունն արձանագրվեց Խ. Հայաստանում և ապա Վրաստանում:

Հայկական ԽՍՀ-ում բրուցելոզի վոթոշ բռնկում մարդկանց մեջնկատվել է 1923—25 թ. թ. այնուհետև այդ դեպքերի թիվը պակասել է: Վնասարարության հետևանքով 1930—33 թվականներից դարձյալ օկսվում է բրուցելոզ հիվանդության տարածումը թե՛ կենդանիների և թե՛ մարդկանց մեջ:

Մարդկանց մեջ բրուցելոզը տարածված էր անասնաբուժական ֆերմաներում, կոլտնտեսություններում, անասնաբուժական խորհրտնտեսություններում (նախկին Արագոյայանի խորհրտնտեսություն, Ալագյազի, Լոռվա խորհրտնտեսություններ և այլն):

1933 թ. մինչև 1936 թիվը Հայկական ԽՍՀ-ում լաբորատոր ձևով արձանագրված էին կենդանիների և մարդկանց բրուցելոզի բավականաչափ դեպքեր, իսկ 1937 թվին նորից առաջ էր յեկել այդ հիվանդության աշխուժացում, վոր հիմնականում պետք է վե-

բաղրի գյուղատնտեսութեան առաքարեզում կատար-
ված վաստակարարութեանը:

Քրուցելոց հիվան-
դութեան արտա-
հայտումը յեվ
ընթացքը

Ինչպէս առաջինը վարակված
վոչխարները և նրանց ար-
տաթորութեանը մարդկանց
համար հանդիսանում են
բրուցելոցով վարակվելու հիմ-
նական աղբյուր:

Ամեն մի վարակի ընթացքը հիմնականում կախ-
ված է յերկու գլխավոր պայմաններից. հիվանդութեան
առաջ բերող միկրոբի ախտածին հատկութեանից (ու-
ժեղութեանը, թունավոր հատկութեանը) և մարդու
մարմնի դիմադրողականութեանից. վորքան բարձր և
միկրոբի թունավոր հատկութեանը և ցածր որպանիզ-
մի դիմադրողականութեանը, այնքան ծանր և ըն-
թանում հիվանդութեան ընթացքը, և ընդհակառակը:

Որդանիզմի դիմադրողականութեանն իր հերթին
ընտրողովում է այն բոց-անտեսական պայմաններով
(աննդի, բնակարանի, աշխատանքի և այլն), վորոն-
ցում ապրում է տվյալ անհատը:

Նայած հիվանդութեան ընթացքին՝ բրուցելոցը
լինում է յերեք տեսակի:

1) Գաղտնի, կամ ջնջված ձևը, յերբ որդանիզմի
ներսում վարակ կա, բայց չի արտահայտվում, վո-
րովհետև որդանիզմի դիմադրողականութեանը նրան
հաղթում է, վարակը հայտաբերվում է միայն արյան
շիճուկի հետազոտման ժամանակ (այդ տեսակը լի-
նում է հաճախ հովիվների, կթողների, անասնաբուժա-
կան և լաբորատորային աշխատողների մոտ):

2) Ամբուլատոր տեսակը, յերբ հիվանդն ունենում ե հնչին տաքություն 37,2⁰ 37,4⁰, հիվանդը գանգառվում ե մարմնի ընդհանուր ջարդվածությունից, թուլությունից, հոդացավից, բայց նրա ընդհանուր դրությունը մնում ե բավարար վիճակում ե նա աշխատանքից չի կտրվում:

Հիվանդի այդպիսի վիճակը բրուցելոզի այդ յերկու տեսակի ժամանակ ել բացատրվում ե միկրոբի թույլ ախտածին հատկությունով, բայց որգանիզմի թուլացման դեպքում հիվանդությունը կարող ե ծանր ընթացք ընդունել:

3) Բրուցելոզի կլինիկական արտահայտված տեսակը, յերբ կան հիվանդության բոլոր գլխավոր նշանները ե կարիք ե զգացվում հիվանդին պառկեցնելու: Հիվանդության այս տեսակը զարգանում ե միանգամից վոչ հաճախ. հիվանդությունը ձևավորվում ե զանգաղորեն, կամաց-կամաց, հիվանդության գաղտնի շրջանը տևում ե մեկ շաբաթից մինչև 2—3շաբաթ, յերբեմն ավելի շատ, մինչև մեկ տարի:

Մարդու որգանիզմում բրուցելոզի հարուցիչը կարող ե գտնվել արյան մեջ, ավշային գեղձերում, փայծաղում, վսեկրուղեղում, մյուս որգաններում: Առաջին տեղը բռնում են փայծաղը, արյունը ե գեղձերը: Վորովհետև միկրոբը տարածվում ե ամբողջ որգանիզմի մեջ, ուստի նրան հայտնաբերել հաջողվում ե նաև հոդապարկի հեղուկի մեջ, հոդերի բորբոքման ժամանակ, կերակրող կնոջ կաթի մեջ, նաև հիվանդի մեզի մեջ:

Այս հիվանդության նշանները բազմազան են:

Արտահայտված ձևի մշտական նշաններինց մեկը հան-
դիսանում է Չերմությունը, վոր լինում է հիվանդու-
թյան ամբողջ ընթացքում, յերբեմն ժամանակավո-
րապես ընդմիջումներ տալով: Զերմության կորա-
գիծը սովորաբար լինում է ալիքաձև, Չերմաստիճանի
տատանումները 36-ից մինչև 41 աստիճան, տաքու-
թյունը սովորաբար սկսվում է բարձրանալ ցերեկ-
վա ժամը 2-ից, կամ 4-ից, ընկնում է առավոտները,
յերբ հիվանդն սկսում է ուժեղ կերպով քրտնել: Այդ
յերևույթը յերբեմն այնպես է տանջում բրուցելոզով
հիվանդին, վոր նա որվա ընթացքում 5—6 անգամ
փոխել է տալիս իր սպիտակեղենը:

Չնայած բարձր Չերմաստիճանին հիվանդի ինքնա-
զգացությունը և խոտրժակն սկզբում շատ լավ է
լինում, վորի շնորհիվ այդ հիվանդությունը հնարա-
վոր է տարբերել մալարիայից և վորովայնի ափֆից,
վորոնց ժամանակ հիվանդի գրությունը հենց սկզբից
ծանր է լինում:

Բրուցելոզի հետևյալ նշանը ձեռքերի և վոտքերի
վոսկրացալն է, հողացավը, հողերի պարկերի բորբո-
քումը, վոր սկսվում է մեծ հողերից ապա անցնում
մանրերին, ցավերը հաճախ կրկնվում են և յեր-
բեմն այնպես ուժեղ, վոր թե հիվանդի և թե բժշկի
ամբողջ ուշադրությունը կենտրոնանում է այդ յերե-
վույթի վրա և աչքից վրիպում են հիվանդության
մյուս նշանները:

Դրան միանում են բարդություններ ներվային
համակարգության կողմից, հիվանդը տառապում է ան-
քնությունից, շուտ-շուտ և առանց պատճառի գրգռու-
վում, ջղախնանում, առաջ են դալիս նեվրիտաներ կո-

դերի ուղղութեան, նեւթիտները բարդանում են խոշոր ներվերի բորբոքումով (իշիազ), վորի հետեանքով հիվանդը կամ բոլորովին չի կարողանում քայլել, կամ կաղում է, ման ե գալիս վաշտի ոգնութեամբ:

Փայծաղը և լյարդը հաճախ մեծանում են, այնքան վոր շոշափվում են:

Հիվանդացած տղամարդկանց մոտ կարող է առաջանալ ձվիկների բորբոքում:

Կանանց մոտ նկատվում է սեռական գործարանների բորբոքում, դաշտանի անկանոնութեան, յերբեմն կրծքային գեղձի բորբոքում:

Աղեստամոքսային սխտեմում զգացվում են՝ ցավեր վորովայնի շրջանում, ամբութեան, վոր հաճախ փոխարինվում է լուծով:

Առաջանում է ընդհանուր արյունապակասութեան, սիրտն արագ ե գործում, դարկերակն արագ ե խփում:

Քրուցելոզի սարբերումը մյուս վարակի հիվանդութիւններից

Բրուցելոզի յերևութները լինում են տարբեր, ա) հաճախ բարձր ջերմաստիճանը հարկադրում է հիվանդին պահել թույլ պահքով (դիետայով), կարծելով, թե գործ ունեն վորովայնի տիֆի հետ (այնինչ անհրաժեշտ ե հենց սկզբից լավ կերակրել ալոպիտի հիվանդներին), բ) մյուս դեպքում հողացավերի հետեանքով, նրան բուժում են վորպէս հողացավով հիվանդի, գ) յերբորդ դեպքում բարձր ջերմաստիճանը և մեծացած փայծաղն ըստեղծում են մալարիայով հիվանդի տպավորութեան, դ) չորբորդ դեպքում անընդհատ ջերմաստիճանը և հի-

վանդի հաճախ քրտնելը տուբերկուլյոզի մասին և մտածել տալիս:

Բրուցելոզն այդ թված հիվանդություններից տարբերել և հաջողվում նրանով, վոր հիվանդության ընթացքն ունի վորոշ առանձնահատկություններ և, վոր գլխավորն է՝ հնարավոր և հիվանդության գոյությունը վորոշել, ոգտվելով արյան շիճուկի քննությունից (Ռայտի ռեակցիա), արյունը ցանկուց, վորպեսզի ըստանան հիվանդության հարուցիչ միկրոօրգանիսի աճը, և դնելով մաշկային փորձ (Բյուսնեյի ռեակցիա) նախաբազկի ներսի մասում.— դրական լինելու դեպքում 24 ժամվա ընթացքում սրտկած տեղն առաջ և գալիս կարմրություն, ուռուցք, ցավազգացություն, ջերմություն:

Հիվանդության սեփոզականու- թյունը

Ամեն մի բրուցելոզով հիվանդ աշխատունակությունից զրկվում և 3—6—7 ամիս, յերբեմն մեկ տարի, նայած մարդու որգանիզմի դիմադրողականությանը և վարակի տեսակին, ինչպես տեսնում ենք, դա մեզ համար մեծ սոցիալական չարիք է, չնայած նրան վոր, մահացությունը մեզ մոտ չափազանց ցածր է և մարդը մարդուն բրուցելոզով չի վարակում:

Մի անգամ բրուցելոզով հիվանդանալը մարդու չի պաշտպանում կրկնակի վարակվելուց (նման չէ կարմրուկին, ծաղիկին և մի քանի այլ հիվանդությունների, վորոնցով կյանքի մեջ հիվանդանում են միայն մեկ անգամ): Այդ նշանակում և, վոր բրուցելոզը, ինչպես և մալարիան ու տուբերկուլյոզը, չի տալիս

մարմնի կայուն դիմադրողականութիւնը (իմմունիտետ), վորոշ շրջանից հետո առողջացած մարդը յենթակա յե կրկնակի վարակման:

**ԲՐՈՒԵԿԵԼՈՂԻ
ԲՈՒԺՈՒՄԸ**

Այս հիվանդութիւնը յուրահաստուկ բուժում չունի, կամ ավելի ճիշտ՝ այդպիսին (բրուցելոզի սպանած միկրոբները լուծույթով բուժումը) դեռ կանոնավոր չի մշակված, տարբեր գիտնականներ առաջարկել են տարբեր ձևի բուժում. ամենից եյականը հանդիսանում ե լավ սնունդը և ոգափոխութիւնը:

Ջերմութիւնն անցնելուց հետո բրուցելոզի հետագա բարդութիւնների շրջանում (յերբ դեռ շարունակվում են հողացավերը և նեվրիտները) շատ լավ արդյունք ե տալիս ջրային բուժումը, վաննաներ, դուշեր, հատկապես հանքային ջրերի՝ ծծումբային վաննաները և ցելսերը շատ լավ են ոգնում բրուցելոզով հիվանդներին (Պյատիգորսկ, Թբիլիսի և և այլ տեղեր):

**ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ
ԲՐՈՒԵԿԵԼՈՂԸ**

Քանի վոր մարդկանց բրուցելոզի տարածումը կախված ե անմիջապես կենդանիների հիվանդացումների հետ, համառոտակի կանգ առնենք և կենդանիների բրուցելոզի վրա:

Թե վորքան լայն ե տարածված այս հիվանդութիւնը կենդանիների մեջ, կարելի դատել հետևյալից. Ֆրանսիայի, Իտալիայի և Իսպանիայի շրջանների մեծագույն մասի կենդանիները վարակված են բրուցելոզով, Ամերիկայում 56 միլիոն գլուխ կենդա-

նիններից 10 միլիոնը հիվանդ են բրուցելոզով, իսկ Գերմանիայում վարակված են կենդանիների 20⁰/₀-ը:

**Հիվանդության
ընթացքը**

Հիվանդության ընթացքը կենդանիների մոտ տարբերվում է մարդկային բրուցելոզից:

Վոշխարների և այծերի մոտ նախածննդյան շրջանում հղի կենդանիների 30—40, յերբեմն 50⁰/₀-ը սկսում են վիժել: Սովորաբար դա լինում է միայն մեկ անգամ, հիվանդության սկզբին: Այնուհետև կենդանու հիվանդությունը շարունակվում է, բայց նա այլևս չի վիժում, սակայն ծնված դասների 15⁰/₀-ը լինում են վոշ կենսունակ, մահանում են լուծից: Հիվանդության մյուս նշաններն են՝ կենդանու պտուկների և աչքերի լորձաթաղանթների այտուցը և կարմրությունը, վոսքի հոդերի և հոդապարկերի բորբոքումը, իսկ արև կենդանիների («ղոշիք», ցուլերի) ձվիկների բորբոքումը:

Վարակված կենդանիները միկրոբներն արտադրում են կաթի և մեղի հետ: Առողջ կենդանու վարակվելը տեղի չե ունենում հիվանդ արտադրողից («ղոշից») բեղմնավորվելու ժամանակ, կթողների միջոցով, կամ յեթե կերը ադտտված է հիվանդ կենդանիների մեղով, վիժած կենդանու հեշտոցային լորձունքով և այլն...

Պոչոր չեղջերավոր անատունների բրուցելոզն արտահայտվում է անպայման վիժումներով (այստեղից է Բանկի «ինֆեկցիոն արորտ» հիվանդության անունը):

Նոր վարակված նախիրներում վիժուհիները կամաց-կամաց շատանում են, այնպես վար 2-րդ, 3-րդ տարին բոլոր անասունները վիժում են, իսկ հետագայում վիժուհիների քանակը նվազում է:

Սովորաբար վիժուհիները տեղի յնն ունենում հղիութիյան 6-րդ, 7-րդ ամիսներին, այդ կախված է նրանից, թե միկրոբը վորքան ուժեղ ազդեցութիւնն է գործել կենդանու սեռական գործարանների վրա:

Միկրոբն սկսում է ուժեղ դարդանալ հղի անասունի դավաճատան մեջ, դրանից առաջանում է լորձաթաղանթների, ինչպես և սաղմի մասերի բորբոքում, վորի հետևանքով մոր ու սաղմի միջև յեղած կապն ընդհատվում է և տեղի յն ունենում վիժում:

Հիվանդութիյան ընթացքում կովերի մտա նկատվում է ջերմաստիճանի բարձրացում, ախորժակի իջեցում, աչքերի լորձաթաղանթների կրկնակի բորբոքում, յերբեմն և հոդերի բորբոքում:

Ցուլերի բրուցելոզն ընթանում է ձվերի լորբուքումով, Բնդմնավորելիս նրանք կարող են վարակել առողջ կովերին:

Հիվանդանում են նաև ձիերը, ուղասերը, եշերը: Վերջին տարիները ձիերի մեջ բրուցելոզի հիվանդութիւնն հաճախ է նկատվել և ապացուցված են դեղքեր, վոր մարդն էլ վարկվել է նրանցից:

Խոզերի բրուցելոզը վիժման ավելի քիչ տոկոս է տալիս (20—25%), նրանք վարակվելիս շուտ են առողջանում, բայց մարդու համար վարակվելու տեսակետից խոզերի բրուցելոզն ավելի վտանգավոր է, քան թե կովերինը, մյուս կողմից խոզերը կարող են

1
A 2505

6666



վարակվել վոչխարի միկրորններով, յեթե ուտում են վիժած կենդանիների սաղմը, ընկերքը և թաղանթները (վորոնք լեցուն են միկրորններով) վոր հաճախ չեն հորում, այլ թողնում են հենց ընկած տեղը:

Ծները նույնպես վարակվում են բրուցելոզով և կարող են վարակել ուրիշներին:

Կենդանիների հիվանդությունը վորոշում են այնպես, ինչպես մարդկանցը—արյան շիճուկի քննության և մաշկային ռեակցիայի միջոցով:

Բրուցելոզ հիվանդության վարակի փոխանցման յեվ սարածման հանապառհները մարդու մոտ,

Ատորյա պայմաններում վարակը տեղի յե ունենում յերբ 1) շփվում են վարակված կենդանիների հետ—նրանց խնամելիս, կերակրելիս, 2) կենդանիների վիժումների ժամանակ, 3) վարակված կեն-

դանիների և մարդկանց աղտոտությունից, 4) մօի հումուլթի հետ շփման ժամանակ (մորթելիս, մաշկելիս), 5) վարակված կենդանիների հում կաթը և կաթնամթերքները գործածելիս, 6) հիվանդ կենդանիների արտաթորություններով աղտոտված մրգից ու բանջարեղենից, 7) վարակված գոմաղբից, հողից ու ջրից:

Վարակման առաջին ճանապարհը սննդամթերքներն են՝ հիվանդ վոչխարի հում կաթից պատրաստած բրինձա պանիրը, վարակված կենդանու հում կաթնու սերը գործածելը:

Վարակված վոչխարի հում կաթից պատրաստած պանիրը, յեթե նա բավականաչափ պահված չի աղաջրի մեջ, հանդիսանում է քաղաքների ընակչության բրուցելոզով վարակվելու հիմնական աղբյուրներից մեկը:

Վարակման յերկրորդ ճանապարհն անմիջական շփումն և կենդանիների հետ (հովիվներ, կթողներ):

Բոլոր դեպքերում վարակումն ավելի արագ և տեղի ունենում, յերբ մարդու մաշկի ամբողջականությունը խախտված և, կան քերծվածքներ ու վերքեր, թեպետ հիվանդության հարուցիչը կարող և մարմնի ներսն անցնել նաև չվնասված մաշկից:

Կարի վարակված ուրյունը

Թե կենդանիների կաթը վորջան և վարակված լինում կարելի չե յեղրակացնել հետեյալից. վարակված կենդանիների 60⁰/₀-ը կաթի հետ բրուցեւաներ են արտադրում: Մեկ խորանարդ սանտիմետր կաթի մեջ միկրոբների քանակը հավասար և 50,000-ի, ուրինն մեկ բաժակ կաթում 10 միլոն միկրոբ կա: Դա ցույց և տալիս, թե բրուցելոզի վարակի հիմնական վայրերում հում կաթ խմելը վորջան վտանգավոր և:

Հիվանդության արածումը կախված արգա յեղանակներից

Բրուցելոզով հիվանդացումը կարող և տեղի ունենալ ամբողջ տարվա ընթացքում, բայց ավելի շատ հիվանդացումներ լինում են գարնանը և ամառվա ամիսներին, այդ կապված և կենդանիների ծնելու և վիժելու ժամանակի հետ, յերբ վարակի տեսակետից ստեղծվում և վտանգավոր շրջան, մյուս կողմից գարնան և ամառվա ամիսներին կենդանիներն ավելի շատ կաթ են տալիս և մարդիկ ավելի շատ կաթնամթերք են գործածում, քան թե տարվա մյուս ժամանակները:

**Վարակված մարդն
իրեւել վարակի աղ-
բյուր**

Կարող եւ արդյոք վարակված մարդը վարակի աղբյուր հանդիսանալ իրեն շրջապատող կենդանիներէ համար—այո, կարող եւ, հիշենք, վոր հիվանդ մարդու մեղի մեջ վարակն առաջ եւ գալիս հիվանդութեան՝ 17-րդ սրից եւ շարունակվում եւ արտադրվել շատ յերկար ժամանակ, յերբեմն 1—2 տարի նույնիսկ նրա առողջանալուց հետո: Սյդ տեսակեալից մեծ նշանակութիւն ունի այն առաջարկը, վոր արվում եւ վարակված հովվին կցել վարակված վոչխարներին եւ ընդհակառակը՝ առողջ հոտին տալ առողջ հովիւ:

Հիվանդ մարդն անմիջական շփման միջոցով չի վարակում մի ուրիշին, բրուցելոզով հիվանդները չեն մեկուսացվում, պահվում են մյուս հիվանդների հետ ընդհանուր պալատներում եւ դա միանգամայն անվտանգ եւ:

**Ցարիք յեւ աշխա-
տանքի բնույթը**

Բնույթից՝ կանայք ավելի քիչ, քան տղամարդիկ: Ըստ ավյալների հիվանդների 72,80% -ը կազմում են տղամարդիկ, 27,20% կանայք:

Ծծկեր հասակի յերեխաները բրուցելոզի վարակի դեմ հայտարարում են տոկոսնութիւն. հիվանդ մոր կաթից ծծկեր յերեխան հազվադէպ դեպքում եւ հիվանդանում, բայց վորքան հասակն ավելի մեծ եւ այնքան ավելի յեն յենթակա վարակի:

Կարող եւ արդյոք վարակված մարդը վարակի աղբյուր հանդիսանալ իրեն շրջապատող կենդանիներէ համար—այո, կարող եւ, հիշենք, վոր հիվանդ մարդու մեղի մեջ վարակն առաջ եւ գալիս հիվանդութեան՝ 17-րդ սրից եւ շարունակվում եւ արտադրվել շատ յերկար ժամանակ, յերբեմն 1—2 տարի նույնիսկ նրա առողջանալուց հետո: Սյդ տեսակեալից մեծ նշանակութիւն ունի այն առաջարկը, վոր արվում եւ վարակված հովվին կցել վարակված վոչխարներին եւ ընդհակառակը՝ առողջ հոտին տալ առողջ հովիւ:

Սովորաբար բրուցելոզով հիվանդանում են միջին հասակի մարդիկ (15—50) տարեկան): Կախված աշխատանքի

Մեծ դեր է խաղում նաև աշխատանքի բնույթը: Որինակ՝ բրիգադիր հովիվները, վորոնք անմիջական ոգնություն են հասցնում ծնող կենդանիներին, շփվում են վիժված սաղմի, լորձաթաղանթների և այլ արտաթորանքի հետ, ավելի շատ են յենթակա վարակի:

Վարակի տեսակետից առաջին տեղը բռնում են հովիվները 42⁰/₁₀, անասնաբուժական պերտոնալը, ապա լաբորատորիաների աշխատողները, վոր գործ ունեն կենդանի միկրոբների հետ և ապա այլ մասնագիտությունները:

**Մեխանիզմներ
կորուստ
բուցելու
մեթոդ**

Թեպետ բուցելու գործը հիվանդանքի քանակը սովորաբար շատ չէ, բայց այդ հիվանդության հետևանքով կորցրած որերի ընդհանուր քանակը հավասարվում է այնպիսի հիվանդ

ություններին, ինչպիսին են մալարիան և վորովայնային տիֆը (այսպես, որինակ, մեզ մոտ), Տրոպիկոտիտոսում 41 հոգի բուցելու գործը հիվանդ բուժելու համար զբաղեցված է 2263 հիվանդանոցային որ):

Բուցելու դեմ պայքարը պետք է տարվի ուժեղ թափով պետական և հասարակական միջոցներով, ինչպես դա կատարվում է մալարիայի, տուբերկուլոզի և այլ ինֆեկցիոն հիվանդությունների դեմ:

**Արուշելոզից ևս-
խազգուհեաց յեկ
պայտաք ևս գեմ**

Վերոհիշյալ տվյալներէց յե-
րևում ե, վոր բրուցելոզը հան-
դիտանում ե մեծ չարիք ինչ-
պես բնակչության, նույնպէս
և ժողովրդական տնտեսու-

թյան համար:

Անկասկած ե, վոր նրա դեմ պայքարի ձեռնար-
կումները պետք ե դնան զուգընթացաբար բժշկա-սա-
նիտարական և անասնաբուժական—սանիտարական
գծով:

Առողջասպահության գծով պայքարը տարվում ե
անհատական և հասարակական միջոցներով:

Անհատականը—գործածել միմիայն յեռացրած կաթ,
բրինձա պանիրը լավ աղ դնել հետո միայն ոգտա-
գործել, պատահական տեղերից վերցրած կաթնամ-
թերքներ չոգտագործել, կենդանիներէ հետ շփում
ունենալու դեպքում զգուշ և ուշադիր լինել, «գտվել
արտահագուստից, ձեռքերը լվալ հաճախակի և տոհա-
սարակ մաքրություն պահպանել:

Հասարակական նախազգուշացման միջոցները հե-
տևյալն են, 1) պաշտպանել շփման միջոցով վարակ-
վելուց, ա) անասնաբուժական ֆերմաների և խորհտըն-
տեսությունների աշխատող ձեռքերը բավարարել
արտահագուստով (ռետինե ձեռնոցներ, կրկնակոշիկներ,
ռետինե գոգնոցներ), սապոնով և ախտահանիչ նյու-
թերով: բ) կենդանիների վիժումների և ծնման շրջա-
նում գոմերն ախտահանել քլորակրով, պարտադիր
կերպով հորել, իբրեւ չափազանց վարակիչ՝ վիժառազ-
մը, նրա թաղանթները և ընկերքը: գ) Բրուցելոզից

վոչ առողջ հոտերին չկցել առողջ հովիվներ, այլ միայն հիվանդներին:

2) Կենդանիների գծով կատարել անասնաբու-
ժական հոտերի «սանացիա»—առողջացում, արյան
շիճուկի քննության միջոցով ջոկել առողջներին հի-
վանդներից և վերջիններին տալ առանձին գոմեր,
արոտատեղեր, խնամող պերսոնալ, դռեր և առանձին
աճեցնել վոչխարների ու կովերի նորածիններին, վո-
րոնք ավելի տոկուն են բրուցելոզի հանդեպ, իսկ
հիվանդ կենդանիները հատկացնել մոամթերման
պլանին:

3) Կաթնամթերքների միջոցով վարակվելուց պաշտ-
պանելու համար:

ա) կաղմակերպել շուկաների մատակարարումը
միայն պաստերիզացիայի յենթարկված (1 ժամ-70 առ-
տիճանի տաքացրած) կաթով, իսկ առանձին անհատ-
ների թույլ տալ վաճառել կաթը, յեթե կթվող կեն-
դանու արյունը պարբերաբար ռոուզվում և բրուցե-
լոզի վերաբերյալ: բ) Վարակված կամ կասկածելի տըն-
տեսություններում կարագը պատրաստել վոչ թե կա-
թի սերից, այլ մածուցից: գ) Բրինձա պանիրը, ինչ-
պես և մյուս մթերքները պատրաստել միայն պաս-
տերիզացիայի յենթարկած կաթից (մինչև 70—80 առ-
տիճան տաքացրած: դ) Այն դեպքերում, յերբ պանի-
րը (Առժողկոմատի և Սննդի ժողկոմատի թույլա-
տվությամբ) պատրաստվում և վոչ-յեռացրած կաթից,
անհրաժեշտ և պանիրը շուկա հանելուց առաջ 2—3 ա-
միս պահել աղաջրի մեջ:

Սննդի ժողկոմատի գծով բաց թողնել հատուկ հրա-
հանգ բրուցելոզով վարակված շրջաններում կաթ-

նամթերքները պատրաստելու և պահելու մասին:
Ամեն մի բրուցելոզի հիվանդութեան պեպքում
հատուկ քարտով հայտնել տեղի առողջապահութեան
մարմիններին:

Այդ հիվանդութեանը լայնորեն պարզաբանել դա-
սախոսութեաններով, զրուցներով, ռադիոհաղոր-
դումներով, բաց թողնել բրուցելոզի մասին թուղթի-
ներ, լողունոցներ, մասսայական գիտական բրոշյուրներ:

Այս համառոտ տեղեկութեանները, վոր մենք տը-
վինք բրուցելոզի վերաբերյալ, բավական են, վոր-
պեղի լայն մասսաները յուրացնեն այդ գիտելիքնե-
րը, կիրառեն այդ միջոցները և ոգնեն նրանց իրա-
պործմանը:

Վորքան վոր անհույս և բրուցելոզի դեմ պայ-
քարի խնդիրը կապիտալիստական յերկրներում, իր
անհատական սեփականատիրական տնտեսութեան-
ներով, աշխատավորութեան շահերը անտես անելու
կարգերով, պլանային ձեռնարկումների բացակայու-
թեանով, այնքան մեղ մոտ այդ խնդիրը հնարավոր
ե և կիրառելի:

Մեզ ե հանձնված ամենաթանկագինը բոլոր գան-
ձերից. մեզ վրա յի դրված խնամքը մարդու առող-
ջութեան մասին: Առողջ հասարակակարգ օտեղծելու
համար մոտակա տարիներում պետք ե արմատա-
խիլ անենք վարակիչ հիվանդութեանները, նրանց
թվում նաև բրուցելոզ հիվանդութեանը:

Առողջապահութեան և անասնաբուժութեան բնագա-
վառում աշխատողները պետք ե ընդհանուր ուժերով
պայքարեն բրուցելոզ հիվանդութեանը լիկվիդա-
ցիայի յենթարկելու համար:

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037225

101
9120 25 4.

A $\frac{I}{2505}$

С. АНАНЯН
Что такое бруцеллез
Из Арх. ОЗР, Вроцлав, 1940 г.